6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1 Սույն պայմանագրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև **25.12.2018** թվականը:

6.2 Սույն պայմանագրի գործողությունը կարող է վաղաժամկետ դադարեցվել.

ա / Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի կողմից սույն պայմանագրի պայմանների էական խախտում(խախտումներ) թույլ տալու դեպքում,

բ/ Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմին պայմանագրի գործողության դադարեցման նախատեսվող օրվանից առնվազն մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելու պայմանով:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից,եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով,որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը,ջրհեղեղը,հրդեհը,պատերազմը,ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը,քաղաքական հուզումները,գործադուլները,հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը,պետական մարմինների ակտերը և այլն,որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի,ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայամանագիրը՝այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Մատակարարման մնացած պայմանները, որոնք չեն նախատեսված սույն պայմանագրով կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

8.2 Կողմերի միջև սույն պայմանագրի մեկնաբանման և կատարման կապակցությամբ առաջացած վեճերը լուծվում են փոխադարձ քննարկումների և բանակցությունների միջոցով, իսկ դրանցում հաջողության չհասնելու դեպքում՝ դատական կարգով:

8.3 Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր ձևով:

8.4 Սույն պայմանագիրը կազմված է 4 թերթից(ներառյալ հավելվածը),հայերեն լեզվով՝ երկու հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, որոնցից մեկը տրվում է Գնորդին, մյուսը՝ Մատակարարին:

Մատակարար	Գնորդ
Zmix	
« Լուսինե Կարապետյան » Ա/Ձ	«Վանաձորի Ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ
Ք.Վանաձոր, Չուխաջյան 11/22	Ք Վանաձոր, Սևակի 51
«ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլբանկ» ՓԲԸ	Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի «Լոռի»
մ/ճ	մ/ճ
Հ/Հ 220059675243000	Հ/Հ 220055140192000
ՀՎՀՀ 66898411	ՀՎՀՀ 06902113
հեռ.093339662 Սարգիս	Հեռ. 0322- 2-86-04 , 4-86-03
Ա/Ձ Լ.Կարապետյան	Տնօրեն Ռ. Չիլինգարյան
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.